Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

22 դեկտեմբերի 2016 թվականի N 52

---

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱ-ԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի ՆԻՍՏԻ N 33 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 8-ՐԴ ԿԵՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրության 8-րդ կետով հավանության արժանացած «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությանն ու դրա իրականացման միջոցառումների ծրագրին և փորձնական ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 11-րդ կետի՝

ա. 5-րդ և 6-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Ծրագրի առաջին փուլի ավարտից հետո նախատեսվում է «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) ստեղծում.

6) «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամն առաջին տարում կստանձնի «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի պատասխանատվությունը: «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի կարողությունները, Ծրագրի իրականացմանը զուգընթաց, կզարգացվեն և կամբողջացվեն այն հեռանկարով, որ այն ինքնուրույն կիրականացնի հանրապետությունում դպրոցական սննդի համակարգի առանցքային օղակի դերը:»,

բ. ուժը կորցրած ճանաչել 7-րդ ենթակետը.

2) N 2 աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16-րդ կետով.

«

16.	«Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի ստեղծում	2016 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարա-րություն	ՀՀ պետական բյուջեից ֆինան-սավորում չի պահանջվում:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 22
Երևան